

ՌՈՒԲԵՆ ՍԵՒԱԿԻ (1885-1915) ՄԱՍԻՆ ՆՈՐ ՅԱՅՏԱԿԱՆԱՆԵՐ

Սիլվա Կապուտիկեանի «Խօսք իմ Որդուն» էն 50 տարիներ առաջ
Ռուբեն Սեւակին զրած բանաստեղծութիւնը

«Բայց մայրենի անուշ լեզու
մի մոռնար որ հայենէն է»

Յովիաննես Չիլինկիրեան

Բորբին ծանօթ է, թէ ինչպէս բարեարոս
թուրքերը դարերու ընթացքին, և մինչեւ
վերջերս, Հայկական պատմական յուշար-
ձանները և եկեղեցիները, Հայերէն Հետք չմնայ բա-
րլ ուժականով քանդած են: Բայց այս բարբարո-
սութիւններուն ենթարկութիւնները միայն Հայերը չեն:
Նոյնպէս Հասպարեան (Առնազ) յոնական և
բիզանդական յուշարձանները և եկեղեցիները զու-
գացած են թրքական բարբարոսութիւններուն:

Այս թրքական քանդումին զու գացող վայրերէն
մէկն է Մարմարա ծովուն վրայ Սի-
լիվրի բերդաքաղաքը, որ կը գտնուի
Պոլիսէն 65 քմ. դեպի արեւմուտք,
Երոպական Թրքակիոյ Հողամասին
վրայ:

Նոյն ատեն Ռուբեն Սեւակի
ճնշտավայրը եղող Սիլիվրի բերդա-
քաղաքը, բուն անունով «Սիլեմբ-
րիա». Հին բիզանդական պատմա-
կան քաղաք մը եղած է.

Սիլիվրիի բիզանդական եկե-
ղեցիները այսքան Համբաւ ունին
եղեր, որ մեր Հօրեղեօր մեզի պատ-
մածին Համաձայն, մինչեւ 1914 թուականը Ասդ-
լիային բիզանդագէտներ մասնաւրապէս Սիլիվրի
եկած են, որպէսզի Սիլիվրիի բիզանդական եկեղե-
ցիներուն խճանկարները ուսումնասիրէն:

Այսօր, պատմական Սիլիվրի բերդաքաղաքէն ոչ
մէկ բան մնացած է: Ոչ բերդ, ոչ յոնական յուշար-
ձան, ոչ բիզանդական եկեղեցի և ոչ ալ բիզան-
դական խճանկար: Թուրքերը ամէն բան քանդած
են: Եւ Սիլիվրի այսօր, անձո՞նի, «պէթոն»
կառոյցներով լեցուած, թրքական քաղաքի մը
վերածուած է, և միացած է Պոլսոյ:

Սիլիվրի բերդաքաղաքը, որ մեր նախնիներուն
բնակավայր եղած է, մինչեւ 1922-ները, մեծ մա-
սսամբ բնակուած է յոյներէ և Հայերէ: Իսկ թուրքերը,
Սիլիվրիի մէջ բերդաքաղաքէն դուրս «վարի թաղա-
մասը» (Asagi Mahalle) ըսուած շրջանը կը բնակին
եղեր, գոյացնելով քանի մը տամնեակ թուրք ընտա-
նիքներէ բաղկացած աննշան փոքրամասնութիւն մը:

Սիլիվրին այն աստիճան յոնական քաղաք մը
եղած է, որ Հռն բնակող Հայերը եղած են լաւ
յոնախօս, ինչպէս որ մեր Հայոը և մայրը սահուն
յոնարէն կը խօսէին:



Եւ այդ շրջանին Սիլիվրիի մէջ նախա-
կըրթարան մը եղող՝ «Ապօնազեան» վարժարանէն
գտն և աւելի բարձր Հայկական վարժարան մը չը-
լալուն, Ռուբեն Սեւակ կը դրկուի Պարտիզակի Ամե-
րիկեան Գոլէճը և յետոյ Պոլսոյ Պէրպէրեան վարժա-
րանը, և 1905-ին ալ կը մեկնի Զուիցերիոյ Լոզան
քաղաքը, ուսանելու տեղույն թժկական Համալսա-
րանը:

Մինչդեռ Ռուբեն Սեւակին քրոջ աղջիկը՝
Ատրինէ Յակոբովիչ Սիլիվրիի Հայկական վարժա-
րանը աւարտելէ յետոյ, դեռ աղջ-
նակ ըլլալուն, Պոլսոյ մէկ Հայկական
վարժարանը չի դրկուիր, և Սի-
լիվրիի յոնական միջազարդ վար-
ժարանը կ արձանագրուի:

Եւ Ատրինէ յոնական վար-
ժարանին մէջ շատ լաւ յոնարէն
գրել և կարդալ սորված ըլլալու
ուրախութեամբ, իր մօրելոր,
Ռուբեն Սեւակին 1910-ին Լոզան
յոնարէն լեզուով նամակ մը
կը ուղարկէ... Եւ Ատրինէն միջոց մը
յետոյ, Ռուբեն Սեւակին պատաս-
խան նամակ մը կը ստանայ:

Այսուեղ կը Հրատարակէնք Ռուբեն Սեւակի իր
քրոջ աղջկան Ատրինէնին գրած նամակը:

Տեղին է նկատել որ Սիլիվրի Կապուտիկեանի
«Խօսք իմ Որդուն» 50 տարի առաջ գրուած Ռու-
բեն Սեւակի այս նամակ-բանսաստեղծութիւնը մնաք կը
Հաւատանք, որ նահատակ բանսաստեղծին ազգային
Հոգեբանութիւնը վկայող և պատմական արժէք ունե-
ցող գրութիւն մըն է: Ահա Ռուբեն Սեւակի 1910-ին
Լոզանէն Սիլիվրի իր քրոջ աղջկան Ատրինէնին գրած
նամակ-բանսաստեղծութիւնը:

Իմ սիրելի փոքր Ատրինէ,
ինձմէ բարձր եւ Յութարէնէ.
Բայց հօրդ, մօրդ քնքուշ լեզուն
Մի մոռնար որ հայերէն է:

Եթէ միջացդ մերէ
Սեծ դպրոցներ գնա՝ Ատրինէ.
Բայց մայրենի անուշ լեզուն
Մի մոռնար որ հայերէն է:

Ծոյլ մի ըլլայր, ծայլ անօրէն է.
Դոյլ շատ զիտուն եղիք մեզմէ.
Բայց մայրենի և Սուրբ լեզուն
Մի մոռնար որ հայերէն է:

Լոզան 1910 Ռուբեն Սեւակ